

Նորին Սրբապետութեան այս
հրդաւոր և գեղեցիկ խօսքեր
պիսի քայլք տպաւորութիւն
ծնցին ունկնդրաց վրայ, այն
միջոցնակ զՆհուլիսն տուին
հրաւիրանայ Հանդիսին, մ
ւսանդ այն նշանաւոր վարդապ
ետ մատոյց Նորին Վեհապե
թեան Հովուապետական գ
ղան, որ չատերու աջերէն
հոօր յորդառաւտ արտասու
րախութեան և ողորդութ
ւն յապագա կարող չէր ինի
տար չէր կրնար անտարբեր
սիւլ այդ չհնազ և սքանչելի

գիտն վերայ առանց պահ մը սըր-
տով ու հոգւով չյափշտակուելու
անցեալ ժամանակներու փառաւոր
և քաջը յիշատակներով . . .

Նորին Վեհափառութիւնն իսկ
անտաքեր չմնաց . նորա վրայ եւս
մեծ տպաւորութիւն գործեց այս
հանդէս և հրաւիրակ սրբազանին
գեղեցիկ խօսքեր . իսկ երբ ստա-
ցաւ իւր ձեռքը հովուական գա-
ւադան , նշմարելի էր թէ ո՛րքան
յուզեալ էր այն պահուն Նորին
սրբազնութեան փափուկ սիրտ եւ
հոգի , և ի՞նչ փառաւոր , ի՞նչ վը-
նեմ , վեհ և պատկառելի էր այդ
վայրկեանին Նորին Վեհափառու-
թեան կերպարանք :

Երբ վերջացուց Գրիգոր սրբազան
իւր ատենաբանութիւն , Սրբազնա-
գոյն Կաթողիկոսն յոտնկայս Հով-
ուական գաւազանը ձեռքին ի դէմս
հրաւիրակ Սրբազաններուն պատաս-
խանեց այսպէս .

« Զեր պատուաւոր հրաւիրակու-
թիւնն արդէն կը յիշեցուցանէ ինձ
« այն ծանր ծանր Հայրապետական
« պարտաւորութիւններն զորս եր-
« կինք գրին իմ վերայ . ես ինը
« կատի ունելով իմ ծերութեան
« հասակ և իմ անձնական տկարու-
« թիւն , չեմ վստահանար խոստա-
« նալ թէ՛ կարեմ լիովին լցուցա-
« նել Ս. Եկեղեցւոյ և սիրելի Ազ-
« գիս բազմակողմանի պահանջք և
« պիտոյք . բայց եթէ այն Տիրական
« ձայնն որ երբեմն կը քաջալերէր
« զՍրբազան Առաքեալն Պօղոս , կը
« խրախուսէ և զիս յասելն « Եւտ
« եմ քեզ շնորհք իմ , զի զօրութիւն
« իմ ի տկարութեան կատարի . » այն
« ժամանակ յուսամ թէ Աստուա-
« ծային օժանդակութեամբ կարեմ
« մասնաւորապէս արդարացուցա-
« նել Ազգի և Եկեղեցւոյ յոյժը և
« ակնկալութիւնքք . ուրեմն կը
« խնդրեմ աղօթեցէք առ Աստուած
« զօրացուցանել իմ հոգեկան եւ

« մարմնական կարողութիւնքս , որ-
« պէս զի մշակ առանց ամօթոյ լի-
« նիմ առաջի Աստուծոյ , առաջի
« Ազգիս Հայոց և առաջի Առաքե-
« լական Սրբոյ Եկեղեցւոյ Նորին » :

Յետոյ Ս. Սինոդի անդամ Սըր-
բազան Յովակիմ եպիսկոպոս մա-
տոյց Նորին Վեհափառութեան Սի-
նոդի պաշտօնական թուղթը , զոր
հրամանաւ Վեհափառին վիճակա-
յին կոնսիստորայի ատենադպիրը
բարձրաձայն կարդաց իւրու ամե-
նեցուն եւ որ ունէր օրինակ զայս .
« Նորին Վեհափառութեան
« Մայրազոյն Պատրիարքի եւ
« Կաթողիկոսի Ամենայն Հայոց տեա-
« ռն Տեառն Մակարայ , »

Ի Լուսաւորչական Հայոց Սինոդէ
Սրբոյ Էջմիածնի
Յայտարարութիւն

« Սինոդս նշանակեալ զկառա-
« վարիչ թեմին Հայոց Արարազու-
« զԲարձր Սրբազան Գրիգոր Արք-
« եպիսկոպոս Սագինեանց և զան-
« զամ Սինոդիս զՍրբազան Յովա-
« կիմ եպիսկոպոս Տ. Գրիգորեանց
« ի պաշտօն հրաւիրակութեան ի
« գիմաց անդամոց Սինոդիս և մի-
« աբանութեան Մայր աթոռոյս ,
« ուղեւորեաց յոտն Զեր Վեհափա-
« ռութեան առ ի հրաւիրել զԶերդ-
« Սրբութիւն յԱթոռ Սրբոյն Գրի-
« գորի Լուսաւորչի :

« Իսկ մեք եւ համայն ուխտ
« միաբանութեանս աղաչեմք զԱ-
« մենաբարեբարն Աստուած զի յա-
« ջողեսցէ Զեզ անփորձ եւ անվը-
« տանգ հասանիլ ի Մայր Աթոռ ի
Ս. Էջմիածին : »

Տեղակալ Ատենադատի Սինոդի
Միւրիւ Արեւելի-դոս

Անդամք Սինոդի
Հմր. 2396 Մեդիւք Եպիսկոպոս
Ի 28 Օգոստոսի Երեմի Եպիսկոպոս
1885 ամի Ներսիս Եպիսկոպոս
Ի Ս. Էջմիածին Մարգրէ վարդապետ
Վ. Ատենադպիրի Ս. Մարգրէանց

Այնուհետեւ հոգեւորական դասը
խոնարհելով առաջի Նորին Վեհա-
փառութեան և համբուրելով նորա
Սուրբ Աջը դուրսեկան ընդունարա-
նէն , ուր մնացին ըստ հրամանի Վե-
հափառին միայն հրաւիրակ Սրբա-
զաններն , որք իշխանների հետ ծա-
նօթանալէն յետոյ , վայելցին Վե-
հափառի հետ նոյն միջոցին մատու-
ցուած սուրճը և ապա ամենեքեան
հրաժեշտ տուին և գնացին իւր-
եանց տեղեր :

Այսպէս վերջացաւ այս գեղեցիկ
հանդէս հրաւիրանաց , որ մի տա-
րօրինակ միութարական տպաւորու-
թիւն գործեց ամենքի վերայ և իւ-
րաքանչիւր ոք զմայլած հիացած և
ոգեւորուած բերնէ բերան սկսան
պատմել իրարու իւրեանց տեսածը
եւ լսածը եւ հանգիսի փառաւո-
րութիւնը եւ շքեղութիւնը :

Ինչպէս 18 Սեպտեմբեր 1885 : — Ամ-
սոյս 14ին , Ս. Խաչի տօնին Նաւա-
կատեաց երեկոյին , Տ. Տ. Մակար
Վեհափառ Հայրապետն ժամեր
գութեան եկաւ Եկեղեցի , շատ չը-
քեղ և փառաւոր հանդիսով ըն-
դունուեցաւ . խուռն բազմութիւն
ժողովրդոց Հայոց և օտարաց ան-
համբեր կսպասէին Եկեղեցւոյ ներ-
սը , դուրսը և փողոցներու մէջ
արժանի լինել տեսութեան Նորին
Սրբազնութեան , և Նորա հայրա-
պետական օրհնութիւնը առնել :
Հոգեւորական դասը իւրեանց պա-
րագլուխ ունենալով հրաւիրակ Գը-
րիգոր և Յովակիմ Սրբազանները ,
« Ուրախ լերա շարականով գիմաւո-
րեցին և տարան Եկեղեցի : Նոյն
օրը առաւօտեան Պատարագ մա-
տոյց Գեր. Գրիգոր Սրբազան և
ձեռնադրեց երկու դպիր ի սար-
կաւագութիւն . իսկ Ս. Խաչի տո-
նին , Յովակիմ Սրբազանը ձեռնա-
դրեց երկու քահանայացուներ : Ս.

Խաչի տօնին առաւօտեան ժամեր
գութեան նոյնպէս եկաւ Վեհա-
փառ Հայրապետն և ինքը սկսաւ
ժամերգութիւնը և մնաց Եկեղեց-
ւոյ մէջ մինչև Պատարագի ժամա-
նակ : Անպատմելի է ժողովրդոց
այդ օրերու ուրախութիւնը և ցըն-
ծութիւնը : Գինեւի Եկեղեցին ,
ինչպէս կը պատմեն ծերունիք ,
դեռ այսքան բազմութիւն իւր մէջ
տեսած շունի և ո՛չ իսկ այդպիսի
չքեղ հանդէսներ Նորին Վեհափա-
ռութեան համար յատկապէս փըռ-
ւած էր Եկեղեցւոյ բակէն սկսեալ
մինչեւ Եկեղեցւոյ մէջը կարմիր մա-
հուտ , որոյ վերայէն անցնելով մը-
տաւ յեկեղեցի : Նահանգապետին
կարգադրութեամբ , ժողովրդոց
բազմութեան համար նշանակուած
էին շատ մը քաղաքապահ և կար-
գապահ զօրականներ :

Այսօր եկաւ հասաւ այս տեղե-
րուսադիմայ միաբան Արժ. Մամբրէ
վարդապետ Մարկոսեան նուիրա-
կութեան պաշտօնի :

Դպրոցական գործն մեծ խնամ-
քով կը մշակուի , և յոյս սննիմք որ
կանոնաւոր ճանապարհի վերայ կը
դուրի հարցը և կորոշուի յօգուտ
Ազգի :

Անցեալ նամակաւս զրկեցի Վե-
հափառ Հայրապետին շնորհուած
Շքանշանին հրովարտակին թարգ-
մանութիւնը . այժմ կը զրկեմ Վե-
ղարի Խաչին հրովարտակինը , որ է
հետեւեալն :

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՀՐՈՎԱՐՏԱԿ
Սըրբազան Գրիգոր-Կոնստանդնուպոլս
Էջմիածին
ՄԱԿԱՐԱՅ

« Բազմաժամանակեայ հոգեւոր
« պաշտօնավարութիւն Զեր գրաւ-
« եաց յանձն Զերոյին Վեհափա-
« ռութեան զհամարումն Ազգին Հա-
« յոց , որ ընտրեացն զԶեզ Հայժըմ

« վասն ունեւոյ զՊատրիարքական Ա-
« թոռ Սրբոյն Գրիգորի Լուսաւոր-
« չին Հայապատանեաց :

« Տեսանելով ի Հովուապետական
« գործունէութեան Զերում զգրա-
«ւական յոյժ մերձաւոր սրտի իմոյ
« բարեկենդանութեան Եկեղեցւոյն
« Հայոց և Հոգեւոր յառաջադիմու-
« թեան որդւոց Նորին , Ամենողոր-
« մածաբար շնորհեմ Զեզ վասն կը-
« բելոյ ի վերայ վեղարի շնորհ Ար-
« ժապիտ , զՍրբազան նշանակն հաւա-
« տոյ , զոգեւորողն որպէս զհովիւս
« այնպէս և զհօտըս նոցին :

« Յանձն առնելով զիս աղօթից
« Զերոց , մնամ առ Զեզ բարեմիտ .

« Յիսկականին Նորին Կայսերական
« Մեծութեան ձեռամբ ստորագրը-
« եալ է : »

ԱՂԷՔՍԱՆԴՐ
Ի Պետերբուրգ
Ի 18 յուլիսի 1885 ամի

Ի Լ Ս Ն

Սթեֆան վելետի Լիզօրըն Բէ-
ճէպ էֆէնտիյեէ օլան մահքիւմէսի-
նին թէսվիյեէսի իշին Գալաթատա
Սուլթան Պայէզիտ մահալլէսին-
տէ Թօքճուլար ճատտէսինտէ վա-
զը օլուպ , ֆէվզինտէ իքի օտա-
եր միւշթէմիլ շէհրի իւշ տտէթ Օս-
մանլը լիւրասը քերա կէթիւրի 215
նօմէրօլու պիր պապ տիւքեան կէ-
տիկինտէ 120 սէհիմ իթիպարըյա
մէտեուու մերգոււմու միւթէվէֆա
բէտէրի Լիզօրտան միւթէքիլէն միւ-
թէսարքի օլտուղը օն պէշ սէհիմի
թարիխի իլանտան իթիպարէն օնպէշ
կիւն սօզկրա մէվզըրի միւզայէաէեէ
գօնուլաճաղընտան իշթիւրաեա թա-
լէպ օլանլարըն վէ տահա զիեատէ
մալիւմաթ ալմադ իսթէեէնլէրին
մահքէմէի թիճարէթ իճրա տայի-
րէսինէ միւրաճաաթ իլլէմէլէրի ի-
լան օլունուր :

